

Քիւ 26444  
Յունիս 27, 1979

Արժանաշնորհ  
Տ. Վարդան ՔՏՆյ. Մկրեան  
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նիւ Եորթ.

Սիրելի Տէր Վարդան,

Հաճեցէք ներփակ գտնել մեր իօսքը ուղղուած համայնքիդ՝ Ս. Խաչ  
Եկեղեցւոյ 50-ամեակին առթիւ:

Ի պատասխան ձեր հրաւերին՝ կը տեղեկացնենք որ ծրագրած են ձեզի  
հետ ըլլալ Կիրակի Դեկտեմբեր 9, 1979ին եւ Շաբաթ Դեկտեմբեր 8ի  
Ճաշկերոյթին՝ երբ հանդիսաւոր կերպով պիտի նշուի Եկեղեցւոյդ օժ-  
ման 50րդ տարեդարձը:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՐԱՋԱՆ ՀՕՐ ԽՕՍԱԸ  
ՆԻՒ ԵՈՐԷԻ ՍՈՒՐԲ ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՀԱՄԱՑՆՔԻՆ

Հոգեկան անխառն հրճուանքով կը բաժնենք Նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցւոյ համայն-  
քի ուրախութիւնը՝ իր Աղօթքի Տան կառուցման եւ օժման 50-ամեակին առթիւ:

Յորելինական այս հանդիսութիւնը ինքնին փաստն է Ս. Խաչ Եկեղեցւոյ հոգեւոր  
կեանքի կենսունակութեան եւ վճռակամ որոշումին՝ անխափան շարունակելու սկսուած  
եւ յիսուն տարիներէ ի վեր ի գործ դրուած աստուածահաճոյ առաքելութիւնը:

Մենք անձնապէս կը վկայենք որ Նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցին, իր կէս դարու  
գործունէութեամբ, ոչ միայն Տիրոջ կենարար իօսքը ջամբած է մեր հաւատացեալնե-  
րուն՝ այլ պատրաստած է առողջ սերունդ մը, որ իր ստացած հոգեւոր եւ ազգային  
կրթութիւնը ի սպաս դրած է այլ համայնքներու կազմութեան եւ զարգացման նուիրա-  
կան գործին եւս:

Յորելինական այս տօնախմբութեան րաւաթիթ մը կու տայ մեզի ոգեկոչելու յիշատա-  
կը այն եկեղեցասէր, ազգասէր եւ նուիրեալ մեր հոգեւոր զաւակներուն՝ որոնք ան-  
տեսելով ամէն դժուարութիւն իրականացուցին եւ միշտ կենդանի պահեցին Ս. Խաչ  
Եկեղեցւոյ համայնքի սնուցած տեսիլքը: Անոնց հոգիները այս պահուս ներկայ են  
մեր մէջ եւ մեզի հետ կ'ուրախանան՝ տեսնելով որ իրենց անձնուիրութեան եւ զոհո-  
ղութեան ոգին փոխանցուած է իրենց յաջորդ սերունդներուն:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց, մեր սրտաբուխ մաղթանքն է որ Աստուծոյ  
օրհնութիւնը միշտ պահպան ըլլայ Ս. Խաչ Եկեղեցւոյ մեր համայնքին, եւ Հոգեւոր  
Հովիւ, ժխական Խորհուրդ ու եկեղեցական կազմակերպութիւններ միշտ ծաղկուն պա-  
հեն համայնքի հոգեւոր, կրթական, մշակութային եւ ազգային կեանքը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

Գր/ՏԵՃԵ 1. 1979